

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի
Գ. Լսարանի ուսանող)

ՎԱՂՎԱ ՕՐԸ

Վսեմ գործ է՝ այսօրն ապրել վաղվա համար,
Վաղվա երգը այսօր գրել.
Վաղվա շենքին դնել թեկուզ համեստ մի քար՝
Այսօրվա մեջ վաղը տեսնել:

Սերմնացանը սերմանում է հերկած դաշտում
Ոսկեհակիներ ցորենն առատ՝
Հոգու աչքով շրջում վաղվա ոսկե արտում,—
Եվ հավատն է լեռն Արարատ:

Արծաթահեր պարտիզպանը դողդոջ ձեռքով
Մատղաշ ծառը պատվաստելիս՝
Այդու վաղվա քաղցրությունն է զգում հոգով,
Եվ շշնջում՝ «ե՛կ, սիրելի՛ս»:

Որմնադիրը քար դնելիս կիսատ պատին՝
Մի հոյակապ շենք է տեսնում,
Վեր խոյացած հաստատուն շենք, հաղթամարմին,
Խաղաղ երկնի ջինջ ոլորտում:

Դիտնականը մտածում է... Անդուլ երկնում
Հայրենիքում մեր կենարար,
Վաղվա համար մի նոր բարիք է նա դարբնում՝
Բարու փոխում ատոմը չար:

Եվ իմ երգն էլ վաղվա երգն է խաղաղատենչ,
Որպես մի հասկ վաղվա դաշտում,
Պատին մի քար, հույսի մի սերմ ա՛յն սրտի մեջ,
Որ իր խաղաղ կյանքն է պաշտում:

Վսեմ գործ է՝ այսօրն ապրել վաղվա համար,
Վաղվա երգը այսօր գրել.
Վաղվա շենքին դնել թեկուզ համեստ մի քար՝
Այսօրվա մեջ վաղը տեսնել: